

Ոսկըր ջըլապատ եւ մորթ թանձր, Աստուած ի փայտ բեւեռեալ.  
Կողըն սըրահերձ եղեալ, ջուր 'ւ արիւն ըզմեզ նորոգեալ.  
Եօթըն անգամ ձայն ածեալ, որ զեօթանց կենցաղս յօրինեալ:

## Լ Զ .

Անեղն Աստուած մադ եղեալ, Նըմայ պարտ էր զայս ներգործել,  
Արեամբն Աստուծոյ ըզմեզ ի մեղաց սըրբել 'ւ ազատել,  
Զմարդիկ ի մահու գրաւել, ի յերկինս ի կեանս հրաւիրել,  
Հրեշտակաց ընկեր առնել, զՆա օրհնել եւ փառաւորել:  
ԼԷ.

Զարեւն ի յերկինս իմա՛յ եւ լուսոյն Նադար դու արա՛յ.  
Որպէս որ ճարակ չըկայ ի Նիւթոյն՝ լոյսն որ հեռանայ.  
Յորժամ որ արեւն երթայ, լոյսն անճառ աղբիւր ցոլանայ,  
Հուրն եւ ճառագայթն եւ Նիւթն միացեալ որ երկու չէ Նայ:  
Այսպէս ի Քրիստոս ասա՛յ, դաւանումն է սրետ, հաւատա՛յ.  
Եւ մի՛ լինիցիս թերի, չու տըղա՛յ տըխմար 'ւ անիմայ:

## Լ Ը .

Սիեղծօղ է Քրիստոս եւ լոյս 'ւ աշխարհիս տեր անտարակոյս.  
Հոգի ու մարմին ու միտք, որ եղել փըրկիչ գերելոյս.  
Թէ չէր միացեալ հողոյս ընդ Բանին Աստուած մեռելոյս,  
Ապա զկապանն ո՞վ լուծէր երբ չըկայ մեզ ելնելու յոյս:

## Լ Թ .

Շատ թագաւորաց մեծաց յիմաստնոց արանց լըսեցի,  
Թ'այնչափ չիկըշտանայ մարդն՝ աստնորովս մինչ որ մեռանի.  
Տանին գերեզման դընեն եւ հողով իւր աչքըն լըցուի,  
Ապա փոշիմնայ 'ւ ասէ թէ՝ Հերի՛ք է 'ւ այլ չիպիտի:

## Խ .

Տեսայ իմ հոգոյս հոգին որ մեռաւ ի հող թաղեցաւ,  
Դարձեալ իմ սիրուս համար Նա յարեաւ ու շատ դատեցաւ.  
Ի սուր 'ւ ի կըտուր երեկ ու քանով Նա քարկոծեցաւ,  
Ի հուր 'ւ ի գեհեն մըտաւ, իմ հոգոյս հոգի ջահեցաւ:

## Խ Ա .

Երկուս ընդ իրար կըռուին, մէկ ի մէկ իսկի չինմանին.  
Մէկ էլ ի կոցա միջին էր մեռած 'ւ անկած ի տեղին.